ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Հ Արագածոտն մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252) 2-43-93, էլ.փոստ՝ aparaniqaxaqapetaran@mail.com

N – 020 /12
29.01.2013 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Ս.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 24.01.2013 թվականի նիստի NN 01-Ն, 02-Ն, 03-Ա, 04-Ա, 05-Ա, 06-Ա, 07-Ա որոշումները:

Քաղաքապետ Գ. Աբրահամյան

Ելք
«Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության ենթակառուցվածքների բաժին»
«30» 01 2013 թ.
Մուտք № 9/343-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

24 Հունվարի 2013 թվականի N 01 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ 2013 Թ. ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12. 2012 Թ N 40 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման» մասին օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին կետի, 63-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 9847,1 հազ. դրամ, որից՝ վարչական մասով՝ 1264,3 հազ. դրամ, ֆոնդային մասով՝ 8582,8 հազ. դրամ՝ համաձայն հատված 4-ի:
2. Ապարանի քաղաքային համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1264,3 հազ. դրամն ուղղել համայնքի 2013թ պարտքային պարտավորությունների կատարմանը, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 8582,8 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կատարմանը՝ համաձայն հատված 5 – ի:
3. Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 19.12.2012 թ «Ապարանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 40- Ն որոշման 1-ին կետով հաստատված եկամուտների գումարն ավելացնել180,0 հազ. դրամով, իսկ ծախսերի գումարը՝ 14027,1 հազ. դրամով:
4. «Ապարանի քաղաքային համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 19.12.2012 թվականի N 40 - Ն որոշման N 1 հավելվածում կատարել համապատասխան փոփոխություններ՝ համաձայն N N 1, 2, 3 և 6 հատվածների:

Ավագանի՝ Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

24 Հունվարի 2013 թվականի N 02 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.11.2012 Թ «ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 34 – Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 06.12.2012 թ Հայաստանի Հանրապետության օրենքի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝
1. «Ապարանի քաղաքային համայնքում տեղական տուրքերի և վճարների մասին» Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 29.11.2012 թ N 34 – Ն որոշման N 12 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
1-1./. Հավելվածի 1.2.կետի (գ) ենթակետի՝
«1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 65.000» նախադասությունը փոխարինել՝
«1001-ից 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 » նախադասությամբ:
1-2. Հավելվածի 1.2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» ենթակետով՝
«3001 –ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100.000»
1-3. Հավելվածի 8-րդ կետի (ա) ենթակետի՝
«Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար՝ 350» բառերը փոխարինել՝
«բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա 1 քմ համար՝ 100» բառերով:
1-4.Հավելվածի տեղական տուրքերի բաժնի վերջում կատարել հետևյալ լրացումները՝
13. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա/. «հիմնական շինությունների ներսում՝ 6000»
բ/. «ոչ հիմնական շինությունների ներսում՝ 1000
14. Ֆիրմային անվանումներում համայնքի «Ապարան» անվանումն օգտագործելու համար՝ 50.000 դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել տեղական տուրքերի ցանկում կատարված փոփոխությունների ու լրացումների հրապարակայնությունը և մոբիլիզացնել աշխատակազմի ուժերը դրանք ժամանակին գանձելու ուղղությամբ:

Ավագանի՝	Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված N 12
Ապարանի քաղաքային համայնքի ավագանու
29.11. 2012 թ N 34 – Ն որոշման

Լրացումները և փոփոխությունները՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանու
24.01. 2013 թ N 02 – Ն որոշմամբ

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

	Տեղական տուրքի և վճարի տեսակը	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ԴՐԱՄ)
	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	
1.	Համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար՝	
1.1	հիմնական օբյեկտների համար	
ա.	մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար	15.000
1.2.	Սույն կետի « ա » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝	
ա	201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	25000
բ	501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	45.000
գ	1001 –ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	50.000
դ	3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	100.000
1.3	Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝	
ա	մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	3000
բ	20 քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար	5000
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
ա	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝	3000
բ	բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի « ա » ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով	3000 + 1-ին կետի «ա» կամ «բ» ենթակետերին համապատաս-խան դրույքաչափ
գ	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:	1-ին կետի «ա» կամ «բ» ենթակետերին համապատաս-խան դրույքաչափ
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար	5000
4	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու 1 քմ թույլտվության համար ՝	
ա	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1000
բ	թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2500
գ	այլ արտաքին գովազդի համար՝	500
դ	Դատարկ գովազդային վահանակների համար՝	700
5.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարեկան թույլտվության համար՝	50.000
6.	Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝	7500
7.	Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակում՝	5000

8	Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար՝	
ա	բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրում 1 քմ համար՝	100
բ	մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝տարեկան՝	150.000
գ	խանութներում և կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ տարեկան՝	30.000
9	Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/ և խաղատներին ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար՝	
ա	Առևտրի օբյեկտների համար՝	30.000
բ	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	50.000
գ	բաղնիքների / սաունաների / համար	200.000
դ	խաղատների կազմակերպման համար	500.000
ե	շահումով խաղերի կազմակերպման համար	250.000
զ	վիճակախաղերի կազմակերպման համար՝	100.000
10	Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու տարեկան թույլտվության համար	1.000
11	Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու յուրաքանչյուր միավորի տարեկան թույլտվության համար՝	5.000
12	Համայնքի արխիվից փաստաթղթերի կրկնօրինակներ տրամադրելու համար	2000
13	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
ա	հիմնական շինությունների ներսում՝	6000
բ	ոչ հիմնական շինությունների ներսում՝	1000
14	Ֆիրմային անվանումներում համայնքի «Ապարան» անվանումն օգտագործելու համար ՝	50000
	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ	
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	10.000
2.	Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելիս անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների փոխհատուցման վճար՝	2.000
3.	Քաղաքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար՝	5.000
ա	Այդ թվում՝ գյուղ. նշանակության հողերի վարձակալման մրցույթի մասնակցության վճար՝	2.000
4	Շինարարական և խոշոր եզրաչափի 1 խմ աղբի սեփական ուժերով հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար, այդ թվում՝	
ա	Բնակչության համար՝	500
բ	Իրավաբանական անձանց համար՝	1500
5	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում կատարելու վճար՝	10.000

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 Հունվարի 2013 թվականի N 03 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2012 Թ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 29-րդ կետի պահանջներով.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների 2012 թ գույքագրման արդյունքները՝ համաձայն N 1 – 9 հավելվածների:
2. Հաստատել համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ քաղաքապետարանին և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատկանող օգտագործման ոչ պիտանի և խոտանման ենթակա գույքի դուրս գրման ցուցակը՝ համաձայն N 10 հավելվածի:
3. Համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանին՝ ապահովել համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների ամբողջական մուտքագրումը գույքի կառավարման ծրագրում և գրանցամատյաններում, ժամանակին և սահմանված կարգով ապահովել դրանց օպերատիվ շարժը, մածվածության հաշվարկներն ու հաշվեկշռային արժեքները:

Ավագանի՝	Կողմ (7)	Դեմ (0)	Չեռնպահ (0)
	Գագիկ Ալեքսանյան Նվարդ Բարսեղյան Վարդան Բարսեղյան Կարեն Գրիգորյան Արկադի Կարապետյան Հովհաննես Շահբազյան Հայկ Շմավոնյան		

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

24 Հունվարի 2013 թվականի N 04 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12.2012 Թ «ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 41 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 / 3-րդ , 34 / 5-րդ , 53-րդ և 54-րդ հոդվածների պահանջներով՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 19.12.2012 թ «Ապարանի քաղաքային համայնքում 2013 թ իրականացվող կապիտալ ծրագրերը հաստատելու մասին» որոշման հավելված N 1 կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝
ա/. Հավելվածի աղյուսակի 8-րդ, 9-րդ և 10 –րդ» 11-րդ տողերի վերջում՝ 3000000, 2000000, 3000000, 4000000 թվերը փոխարինել՝ 2500000, 1500000 և 2382800, 4200000 թվերով:
բ/. Հավելվածի աղյուսակն ավելացնել լրացուցիչ 13-րդ հետևյալ տողով՝
«Բուլդոզերի ձեռք բերում – 6000000»
գ/. Հավելվածի աղյուսակի վերջին սյունակի հանրագումարը կարդալ՝ 28.582.800 դրամ:
2. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքում 2013 թ իրականացվող կապիտալ ծրագրերը՝ փոփոխություններով և լրացումներով՝ համաձայն հավելվածի:

Ավագանի՝	Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

N	Ծրագրի անվանումը	Գումարը /դրամ/
1	Թիվ 1 մանկապարտեզի մասնակի վերանորոգում	300000
2	Թիվ 2 մանկապարտեզի մասնակի վերանորոգում	300000
3	Մարզադպրոցի մասնակի նորոգում	1000000
4	Քաղաքապետարանի վարչական շենքի մասնակի նորոգում	1000000
5	Մանկական խաղահրապարակների կառուցում և վերանորոգում	400000
6	Շենքերի ցուցանակների և համարների տեղադրում	1500000
7	Գիշերային լուսավորության վերականգնում / Սևակ, Ծաղկունյաց, Մահուբի, Մաշտոց /	1500000
8	Ներքաղաքային փողոցների ասֆալտի նորոգում	2500000
9	Գրունտային փողոցների խճալցում- բարեկարգում	1500000
10	Կապիտալ այլ նորոգումներ	2382800
11	Գույքի ձեռք բերում	4200000
12	Ծառայողական ավտոմեքենայի ձեռք բերում	6000000
13	Բուլդոզերի ձեռք բերում	6000000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	28582800

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 Հունվարի 2013 թվականի N 05 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՈՒԼԴՈԶԵՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի, 53-րդ և 54-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունն այն մասին, որ դեկտեմբեր և հունվար ամիսներին տեղացած աննախադեպ քանակի ձյունը լուրջ պրոբլեմներ է ստեղծել քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների բավարար կենսագործունեությունն ապահովելու գործում, իսկ քաղաքապետարանի միակ հնամաշ DT-75 մակնիշի բուլդոզերը և պայմանագրային կարգով վարձակալած մյուս նույն մարկայի բուլդոզերներով անհնարին է դարձել ապահովելու ձյան մաքրման աշխատանքները, ուստի առաջացել է ավելի հզոր՝ S-130 բուլդոզերի ձեռք բերման խիստ և հրատապ պահանջ:
Միաժամանակ, ՀՀ Նախագահական ընտրությունների կազմակերպման ընթացքում քաղաքի բավարար կենսագործությեունությունն ապահովելու հրատապ անհրաժեշտությունից ելնելով՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ շտապ և արտահերթ կարգով ձեռք բերելու S - 130 մարկայի բուլդոզեր՝ մեկ մարդուց գնում կատարելու միջոցով՝ բանակցային ընթացքակարգով:

Ավագանի՝	Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
	Գագիկ Ալեքսանյան		
	Նվարդ Բարսեղյան		
	Վարդան Բարսեղյան		
	Կարեն Գրիգորյան		
	Արկադի Կարապետյան		
	Հովհաննես Շահբազյան		
	Հայկ Շմավոնյան		

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

24 Հունվարի 2013 թվականի N 06 - Ա

ԱՊԱՐԱՆ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ 2013 Թ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ և 32-րդ հոդվածի 11-րդ կետերի պահանջներով՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի քաղաքապետարանի կողմից պատվիրակված լիազորությունների կատարման նպատակով Ապարանի միջհամայնքային միավորմանը վճարվող 2013 թ անդամավճարի չափը սահմանել՝ ամսեկան 190.000 հազար դրամ:

Ավագանի՝	Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

24 Հունվարի 2013 թվականի N 07 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 19.01.2013 թ N 4 գրությունը՝ համաձայն որի՝ ՀՀ զինված ուժերում զինծառայող – սպա Տիգրան Գեղամյանը միաժամանակ հանդիսանում է Ապարանի քաղաքային համայնքի ավագանու անդամ, որը հակասում է «Զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 13-րդ, 18-րդ հոդվածի 3-րդ և 21-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝
1. Վաղաժամկետ դադարեցնել Ապարանի քաղաքային համայնքի ավագանու անդամ Տիգրան Գեղամյանի լիազորությունները:

Ավագանի՝ Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան